ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

14 հոկտեմբերի 2013 թվականի N 48 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 46-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի <<Դիլիջանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սիլվա Պետրոսյանին կարգապահական տույժ կիրառելու մասին>> թիվ 46-Ա որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝
<<Հանձնարարել <<Դիլիջանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ միջոցներ ձեռնարկել իրենց պարտականությունների մեջ թերացած աշխատակիցների հայտնաբերման և համապատասխան իրավական գնահատականներ տալու ուղղությամբ՝ հետագայում բացառելով նման դեպքերը>> :
2. Սույն կարգադրության մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանին և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի <<Դիլիջանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

14 հոկտեմբերի 2013թ.
ք. Իջևան